

ԱՇՈՏ ՊԱՏՄԱԳՐՅԱՆԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ-ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՔԱՌԱՍՆԱՄՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԸ ՓԱՐԻԶՈՒՄ

Նոյեմբերի 6-ին, Փարիզի Օթել Լյուտեսիայի սրահում տոնվել է Աշոտ Պատմագրյանի երաժշտական-կրթական գործունեության 40-ամյակը, ֆրանսահայ արվեստագետների և մտավորականների նախաձեռնությամբ։

Հոբելյանական հանդեսին նախագահել է Փարիզի առաջնորդ և Հայրապետական Նվիրակ գերաշնորհ Տ. Սերովբե եպիսկոպոս Մանուկյանը, ընկերակցությամբ Անգլիայի Հայրապետական պատվիրակ գերաշնորհ Տ. Պսակ սրբազանի, Երուսաղեմի Պատրիարքության Իսրայելի ներկայացուցիչ հոգեշնորհ Տ. Բարգեն վարդապետ Ապատյանի և Իսահակ վարդապետ Ղազարյանի, որոնք էջմիածնից դեպի Երուսաղեմ իրենց ճանապարհին հյուրաբար գտնվում էին Փարիզում։

Հոբելյանական հանդիսությանը ներկա են եղել նաև գերապայծառ Կ. Ամատունին, ինչպես նաև Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ հայր Հովհաննես Լանդյանը և այլ պաշտոնական հայ և օտար անձնավորություններ։

Հոբելյանական հանդեսը բացել է պր. Նուրհան Ֆրենկյանը։ Ապա հոգեշնորհ Տ. Բարգեն վարդապետ Ապատյանը կարդացել է Վեհափառ Հայրապետի օրհնության հեռևյալ կոնդակը, որը ունկնդրվել է հոտընկայս և վեհագույն լռության մեջ.

Հոգ, Ս. Էջմիածնի Գեորգյան Ճեմարանի Ձեր ուսանողության տարիներեն սկսյալ, սիրած եք հայ եկեղեցական ու ժող՝ վրդական երգը, ու ապա օտար ափերու վրա, Ս. Էջմիածնի և Մայր Հողի խորհուրդով ոգեշնչված, ավելի քան քառասուն տարիներ անդադար, եվիրումով և իրավ արվեստագետի սրբազան նուրով, ծառայած եք հայ երգի ուսումնասիրության, տարածման և ծաղկման ազնիվ աշխատանքին, գաղութահայ կյանքի անհարազատ ու հանախ ծանր պայմաններու մեջ։

Հարուստ է հայ ժողովուրդի հոգևոր գանձարանը եկեղեցական, ժողովրդական և աշուղական երգերով։ Մեր ժողովուրդը ապրած է ու կապրի երգելով, իր երգին մեջ դրած իր բովանդակ հոգին, իր բոլոր հույզերն ու իր բոլոր երազները, և հայրենի բնաշխարհի գունագեղ լույս պատկերը։

Անա ոգեղեն այդ մեծ հարստության անխոնջ մշակներեն եղած եք Դուք, և Ձեր գործունեությամբ հայ Սփյուռքի մեջ ստեղծած եք կյանք, խանդավառություն և ոգևորություն հայ երգի փառքին համար։ Ձեր անունը և վաստակը ընդմիշտ կապված պիտի մնան մեր մեծ երաժիշտներու փառավոր հույլին՝ Եկմալյանի, Կարա-Մուրզայի, անմահ Կոմիտաս վարդապետի և հայ երգի ուրիշ վարպետներու հետ։

Մեծ է նաև Ձեր վաստակը որպես հմուտ երաժշտագետ և մանկավարժ-ուսուցիչ։ Ձեր «Երաժշտարան» դասագրքերով, Ձեր ուսուցման ինքնատիպ արվեստով և օտարներու համար Ձեր կարդացած դասախոսություններով, պատվավոր տեղ մը կգրավեք այսօր Սփյուռքի արվեստագետներու շարքին մեջ, և մեծ ծառայություն կմատուցանեք՝ մեր ազգային երաժշտությունը ուրիշ ժողովուրդներու ծանոթացնելու Ձեր գործունեությամբ։

Սույն Հայրապետական կոնդակով կօրհնեմք զՁեզ և Ձեր երաժշտական, կրթական քառասնամյա վաստակը հայ կյանքեն ներս ու կմաղթեմք Ձեզ, որ նաև այսուհետև երկար տարիներ, քաջառողջությամբ ու խաղաղությամբ ճնշեցնեք հայ հավատավոր ժողովուրդի «Տէր ողորմեա»-ն ու հայ շինականի «ճորովել»-ը ամեն տեղ, ի պանծացումն հայ երաժշտության և ի մխիթարություն և ի վայելումն մեր սիրելի ժողովուրդի:

Ս. Էջմիածինը հպարտ է Ձեզմով և հույժ մխիթարված:

«Ողջ լեռուք և զօրացեալ Ս. Հոգւով և յաւէտ օրհնեալ ի Տեառնէ և ի Մէնջ. ամէն»:

Վեհափառ Հայրապետի օրհնության կոնդակի ընթերցումից հետո, գերաշնորհ Տ. Սերովբե սրբազանը ողջույնի ջերմ խոսքով շնորհավորում է Աշոտ Պատմագրյանի հոբելյանը: Ապա հոբելյար արվեստագետի երաժշտական-կրթական շնորհակալ աշխատանքի մասին բովանդակալից զեկուցումով հանդես է եկել գերաշնորհ Տ. Պսակ սրբազանը: Նա իր զեկույցում առանձին դրվատանքով խոսել է նաև տիկին Պատմագրյանի մասին, որպես հմուտ երաժշտի, որը 30 տարիներ թև ու թիկունք է եղել իր արվեստագետ ամուսնուն:

Հոբելյար արվեստագետին ողջունել են նաև օրիորդ Գարագաշյանը, պր. Հ. Բալուլյանը և ուրիշներ: Հանդեսում կարդացվել են հոբելյանի առիթով ստացված բազմաթիվ շնորհավորական հեռագրեր և ողջույնի ուղերձներ:

Վերջում շնորհակալության և երախտագիտության ջերմ խոսք է ասել հոբելյար պր. Աշոտ Պատմագրյանը իր հոբելյանի առիթով արտահայտված համազգային հարգանքի և ուշադրության համար: Նա իր խորին շնորհակալությունն է հայտնել մանավանդ Ամենայն Հայոց Հայրապետին, որը «Բարեհաճեր էր Ս. Էջմիածնի գահույքի բարձունքեն սրբաբատառ կոնդակով Իր օրհնությունը ուղարկելու», ապա Հայաստանի երաժշտագետների միությանը, որը «Շատ սրտառուչ և խանդավառ խոսքերով հեռագրած էր Մայր Հայրենիքի իր պաշտոնակիցներուն շնորհավորանքներն ու գնահատականը»:

Հանդեսի վերջում տրվում է ճոխ համերգ հոբելյար արվեստագետի ստեղծագործություններից, մասնակցությամբ անվանի դաշնակահարուհի օրիորդ Տ. Զարափյանի, երգչուհի օրիորդ Ն. Տիրատուրյանի, տիկին Շաքե Գալայճյանի և ուրիշների: